Ապառաժ

Հիմնադրված է 1991 թվականին: 5 (526) մարտ 17-31, 2023թ.

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀՅ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Համախմբման կիզակետը

Համահայկական տիրույթում այսօր ամենից շատ խոսում են համախմբման մասին: Համախմբումը հավաքականության նպատակների իրականացման անհրաժեշտ տարրն է: Յուրաքանչյուր ոլորտում պառակտումը, ոչ նպատակասլաց ընթացքը պատճառ է դառնում ուժերի ջլատման եւ ներուժի վատնման:

Հայ իրականության մեջ 2018թ. տեղի ունեցած իշխանափոխությունը եւ դրան հաջորդած մի քանի ամսվա պատրանքային խանդավառությունը՝ թվում էր, թե կարող է նոր լիցք է տալու համահայկական զարթոնքին՝ թոթափելով անտարբերության եւ անհոգության մթնոլորտը: Սակայն պատահեց ճիշտ հակառակը. գնալով՝ ազգայինը դուրս մղվեց օրակարգից:

Արցախը, որպես ազգային-ազատագրական պայքարի խորհրդանիշ, այն շաղախն էր, որն ավելի քան 25 տարի ստեղծել է հայկական աշխարհի տարբեր հատվածների միավորման արդյունքում ձեւավորված գաղափարական համակարգը:

Արցախյան պայքարը նախ եւ առաջ հիմք է հանդիսացել ազգային գիտակցության արթնանալուն: Հայկական պետությունը հիմնադրվել է հենց այդ ազգային գիտակցության գաղափարախոսության հենասյուների վրա: Պատահական չէ, որ ինչպես Արցախի, այնպես էլ Հայաստանի Հանրապետության Հռչակագրերում անդրադարձ կա հայ ժողովրդի դարավոր իղձերի իրականացման գաղափարին: Արցախում հայկական պետության կայացումը ինքնին փաստ է, որն արձանագրվել է նաեւ հայկական տարածքների ընդլայնմամբ՝ պատմական հայրենիքի վերատիրացմամբ:

Հաղթանակն ինքնին համախմբող բնույթ ունի: Բոլորը ցանկանում են բաժին ունենալ հաղթանակից, մասնակիցը լինել հաղթանակի «խրախճանքին»: Ցեղասպանության ենթարկված հայ ժողովուրդը Արցախյան հաղթանակի լիցքով թե՛ ենթակայորեն եւ թե՛ առարկայաբար կանխել է ցեղասպանությունը: Աշխարհասփյուռ հայ ժողովրդի մեջ ցեղասպանության ենթարկված ժողովրդի բարդույթը փարատվել է Արցախով, իսկ գործնականում՝ պանթուրքիստական նկրտումները չեզոքացվել են հայկական բանակի կուռ շարքերի առկայությամբ:

Այս հոլովույթը պատճառ է դարձել «Հաղթող հայի» ինքնության հաստատմանը, որի առանցքը, սեւեռակետը հանդիսացել է Արցախը:

2018թ. իշխանափոխությունից հետո ապազգային հոսանքները մեկ առ մեկ քայքայել են վերը նշված հիմնասյուները: Եվ հենց այդ պատճառով է, որ չի գոյանում նպատակաուղղված համախմբման բեմահարթակը:

Հայաստանի Հանրապետության ձախավեր իշխանությունների գրանցած պարտություններն իրականություն են, հաճախ՝ հուսահատեցնող, թեւաթափ անող, սակայն միայն ու միայն պայքարի առկայությամբ է, որ կարելի է թոթափել պարտվածի հոգեկան բարդույթը եւ վերականգնել ազգային-գաղափարախոսությամբ օժտված համախմբման հենասյուները:

Այսօր Արցախը միասնականորեն պայքարում է հայկական պետականության պահպանման, հայ ժողովրդի դարավոր իղձերի իրականացման համար, եւ դա հենց այն կիզակետն է, որի հիման վրա հնարավոր է ձեւավորել համահայկական միասնականություն:

100 օր շրջափակված Արցախ. ՀՅԴ ԱԵՄ-ի նախաձեռնությամբ ակցիա Ստեփանակերտում

2023թ. մարտի 21-ին լրացել է Արցախի շրջափակման 100-րդ օրը: Թշնամի Ադրբեջանը 100 օր շարունակ չի կարողացել հասնել իր դավադիր նպատակներին՝ հայաթափել Արցախն ու գրավել այն: 2020թ. դաժան պատերազմից հետո թեեւ վիրավոր, սակայն Արցախի սիրտը բաբախում է, իսկ դա նշանակում է, որ արցախցին պայքարում է:

Սննդի, դեղորայքի, վառելիքի, էլեկտրականության ու գազի բացակայության պայմաններում է արցախցին ապրում: 3 պատերազմի բովով անցած, բազմաթիվ զրկանքներ ու դաժանություններ տեսած արցախցու կամքն անկոտրում է: Արցախցին հավատարիմ է իր ընտրած պայքարի ուղուն:

Ադրբեջանի կողմից Արցախի շրջափակման ցեղասպանական քաղաքականության 100-րդ օրը Արցախի երիտասարդները եւս մեկ անգամ ցույց են տվել իրենց հաստատակամությունը՝ այս հողում ապրելու ու արարելու՝ ի հեճուկս համայն աշխարհի եւ բոլոր դժվարությունների:

2023թ. մարտի 21-ին ՀՅԴ Արցախի երիտասարդական միությունը Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում կազմակերպել է ակցիա՝ վերահաստատելու այդ կամքը, արցախցու ձայնը լսելի դարձնելու համայն աշխարհին, պայքարի վճռականությունն արտահայտելու եւ հայ ժողովրդի միասնական կամքն ապացուցելու համար:

Ակցիան սկսվել է շրջափակման ընթացքում թշնամու դիվերսիոն գործողությունների ընթացքում զոհված ոստիկանների եւ Արցախյան գոյապայքարում նահատակված հայորդիների հիշատակը մեկ րոպե լռությամբ հարգելով:

Հայ ժողովրդի պատմության ամենածանր օրերին նրան նեցուկ է եղել Հայ առաքելական եկեղեցին: Արցախի համար այս ծանր օրերին եւս ժողովրդին հոգեւոր ամրություն հաղորդողն ու նրան առաջ մղողը եկեղեցին է: Ակցիայի ժամանակ իր խոսքն է ասել ՀԱՍԵ Արցախի թեմի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն տեր Վաչագան քահանա Գյուրջյանը:

«Սիրելի՛ հայրենակիցներ,

Այսօր բոլորիս համախմբել է մեկ նպատակ եւ մեկ գաղափար՝ Արցախում ապրելու հաստատակամություն եւ վճռականություն: 100 օր է, ինչ Արցախը միջազգային հանրության անպտուղ մտահոգությունների եւ հայտարարությունների ներքո գտնվում է Ադրբեջանի կողմից արհեստականորեն ստեղծված շրջափակման մեջ:

100 օրն ինքնին ոչ մի խորհուրդ չունի, բայց մի ամբողջական եւ լուրջ ժամանակահատված է վերլուծելու այս ընթացքում արցախցու ապրած կյանքը եւ մեր կրած դժվարությունները: Այո, մենք կրեցինք եւ շարունակում ենք կրել կենցաղային շատ դժվարություններ, բայց սրան զուգահեռ բացահայտեցինք մեր մեջ թաքնված շատ որակներ՝ համբերություն, ներողամտություն, եղբայրասիրություն, մարդկային պարզ շփումներ, որոնցից շատ էինք հեռացել: Այս շրջափակումը ստեղծողների ցանկությամբ մենք շարունակում ենք կառչած մնալ մեր հողին:

Հիսուս Քրիստոսը Ավետարանում սովորեցնում է՝ «Միայն հացով չէ ապրում մարդ, այլ նաեւ՝ ամեն մի խոսքով, որ դուրս է գալիս Աստծո բերանից»: Արցախցիներն այս ճշմարտությունն ապրեցին այս 100 օրերի ընթացքում, սակայն խմբագրեցին այն հետեւյալ կերպով նաեւ՝ «Միայն հացով չէ ապրում մարդ, այլ նաեւ Աստծուց շնորհված սրբազան արժեքներով՝ հայրենիք, պետություն եւ անկախություն»: Շատ հաճախ ենք մենք ուրախանում, երբ լսում ենք գովեստի խոսքեր Արցախի բնության, քաղաքամայր Ստեփանակերտի մաքրության մասին, բայց որչափ հիանալի կլինի, երբ ամբողջ աշխարհում սկսեն խոսել արցախցիների հոգեւոր, բարոյական մաքրության մասին:

Մենք աշխարհին ոչ մի բանով չենք կարող զարմացնել եւ ստիպել մեզ արժեւորել, բացի մեր փոքրիկ հայրենիքը քրիստոնեական սիրո եւ եղբայրասիրության դարբնոց դարձնելուց: Տեղին է հիշել Հովհաննես Թումանյանի խոսքերը. «Ներսից է լինելու փրկությունը, որովհետեւ ներսից ենք փչացած»:

→ 2

100 օր շրջափակված Արցախ. ՀՅԴ ԱԵՄ-ի նախաձեռնությամբ ակցիա Ստեփանակերտում

1← Ուստի, սիրելինե՛ր, անցնող այս 100 օրերից դասեր քաղելով՝ լցվենք ապագայի հանդեպ լավատեսությամբ, հավատարիմ մնանք մեր պետությանը, եղեղեցուն եւ ընտանիքներին: Մենք չենք կարող ոչ մի տեղ մեզ ամբողջական ու երջանիկ զգալ եւ ոչ ոք իրավունք չունի մեզ զրկել աստվածաշնորհ մեր հայրենիքից: Մենք սիրո կապանքներով ենք բռնված մեր հողից: Աստված ներում է միշտ, մարդիկ ներում են երբեմն, բայց հողը չի ներում երբեք, ուստի հաստատուն մնանք մեր որոշման եւ պայքարի մեջ: Օրհնյալ է մեր ուղին, որովհետեւ աստված մեզ հետ է»:

ՀՅԴ ԱԵՄ-ի անդամ, ուսուցչուհի Հեղինար Գրիգորյանը ակցիայի ժամանակ հնչեցրել է ՀՅԴ ԱԵՄ-ի ուղերձը՝ Արցախի շրջափակման 100-րդ օրվա կապակցությամբ:

«Շրջափակման մեջ պայքարի 100-րդ, իսկ Արցախյան գոյապայքարի հերթական օրն է: Այս պայքարը սկսել են մեր հայրերը 1988-ին: 35 տարի առաջ մեր ժողովուրդը կանգնած էր կենսական մի հարցի առջեւ, որը մինչ այդ կարծես գոյություն էլ չուներ: Այդ ժամանակ պայքարի անհրաժեշտության գիտակցումը միասնական նպատակի շուրջ համախմբեց ողջ հայությանը՝ ձեւավորելով համազգային շարժում, որը հետագայում ստացավ Արցախյան շարժում անվանումը: Այդ օրերին համայն հայությունը համախմբվեց, մի բռունցք դարձավ, ու թշնամին զգաց հայի բազկի ուժը՝ խուճապահար փախչելով Շուշիից ու մնացած հայկական տարածքներից:

Այժմ՝ 35 տարի անց, հայտնվել ենք նույն իրավիճակում: Ցեղասպան թշնամին փորձում է հասնել Արցախի ամբողջական հայաթափմանը, Հայաստանի վերջնական կործանմանը: Արցախի անկումը կբացի դեպի Հայաստան դարպասները, եւ հայությունը կկորցնի այն միջնաբերդը, այն վահանը, որ 35 տարի շարունակ պաշտպանում էր Հայաստանը:

Հայրենիքի ողբերգական կորուստների հետեւանքով մեր ժողովուրդը հայտնվել է հուսահատական անկման մեջ, որին պետք է վերջ դնել: Անորոշության այս լաբիրինթոսում հայտնված ժողովուրդը պետք է վերագտնի պայքարելու կամքը, պետք է հասկանա, որ Հայաստանն ու Արցախը կարող են գոյատեւել միայն միասնաբար՝ ձեռք ձեռքի տված:

88-ի օրերին մեր ավագ սերունդը գիտակցեց այս անհրաժեշտությունը եւ հաղթանակեց: Այսօր հերթը մերն է: Հայրենիքն ունի մեր կարիքը, մենք ունենք հայրենիքի կարիքը: Մեր տղաները, ովքեր իրենց կյանքն են տվել մեզ պաշտպանելով, այսօր ունեն մեր պաշտպանության կարիքը: Պատերազմից 2 տարի անց դեռեւս շարունակվում են նոր շիրմափոսեր փորվել: Եղբայրականում տղերքի կողքին մի քանի օր առաջ իրենց նինջն են գտել թշնամու ահաբեկչությանը զոհ գնացած մեր ոստիկանները: Մենք պետք է պաշտպանենք այդ հողը, որտեղ հանգչում են նրանք:

Այս հողը շաղախված է մեր պապերի, հայրերի ու եղբայրների սրբազան արյամբ, այս հողի համար կյանքեր ենք կորցրել, որ այսօր պահենք այս հողը մի բուռ, անունը Արցախ պահենք...

Անկախ իրավիճակից, անկախ շարունակվող շրջափակումից՝ մենք չենք կարող հանձնվել եւ դադարեցնել մեր պայքարը: Հիշե՛ք, մեր ճակատին գրված է պայքար... Մենք պետք է մինչեւ վերջ պայքարենք մեր հայրենին պահելու համար, քանզի հայրենիքը լոկ հող չէ...

Եվ ուրեմն, մենք՝ Արցախի երիտասարդներս, ոչ ենք ասում Ադրբեջանի պահանջներին եւ հայտարարում ենք ի լուր ամբողջ աշխարհի՝ մենք կանք, մենք ապրում ենք, մենք պայքարում ենք եւ պայքարելու ենք հանուն մեր հազարավոր զոհերի հոգիների հանգստության, հանուն Հայաստանի, հանուն Սփյուռքի, հանուն մեր նվիրական երազների, հանուն ազատ ու անկախ Արցախի, հանուն Ազատ, անկախ ու միացյալ Հայաստանի:

Մենք կոչ ենք անում Հայաստանում եւ աշխարհի այլ երկրներում մեր հասակակիցներին՝ միանալ մեր այն երիտասարդներին, ովքեր այս օրերին աշխարհի տարբեր անկյուններում ցույցեր են անցկացնում՝ ի զորակցություն Արցախի»:

Արցախի պետական համալսարանի ուսանողուհի, ՀՅԴ ԱԵՄ-ի անդամ Լարիսա Ներսիսյանը եւս հանդես է եկել ելույթով՝ կոչ անելով միջազգային հանրությանը դատապարտել ու կանխել Արդբեջանի ցեղասպան քաղաքականությունը Արցախի նկատմամբ.

«Հարգելի՛ հայրենակիցներ,

Այսօր լրանում է Արցախի շրջափակման 100-րդ օրը: 100 օր շարունակ արցախցիներս պայքարել ենք մեր լինելիության համար, պայքարել ենք մեր հայրենիքի փրկության համար:

2020-ին մեր որդիների նկատմամբ թշնամու կողմից իրագործված անմարդկային արարքների հիշողությունները թարմ են:

1915, 1921, 1988, 2020. դարեր ի վեր թշնամու ձեռագիրն անփոփոխ է, նպատակը՝ մեկը՝ բնաջնջել հայ ազգին: Այս օրերին, երբ թշնամու սուրը կախված է Արցախի գլխին, ավելի քան ներքին համերաշխությունն ու միասնականությունը կարեւոր են վերահաս վտանգներին ու փորձություններին դիմակայելու համար:

Ներքին անհամերաշխությունն ավելի շատ է հայրենիքը կորստի մատնում, քան եկած թշնամին: Եվ իրոք, թշնամին կարողացել է մեզ հաղթել, երբ որ խաթարվել է մեր միաբանությունը: Ինչքան էլ որ ծանր վիճակում լինենք, ինչքան էլ որ հուսահատ լինենք, պետք է ապավինենք միայն մեր ուժերին:

Պատմության մեջ հայտնի է Լենինգրադյան դաժան շրջափակման հաղթական ավարտը: Այս օրինակով հաղթանակի հասնելու գաղափարը պետք է առաջնորդի մեզ:

Միջազգային հանրության կողմից այս 100 օրերի ընթացքում արված հայտարարություններն ու գրված որոշումները որեւէ կերպով չեն ազդում Ադրբեջանի վրա: ՄԱԿ, ԵՄ, Հաագայի դատարան, Freedom House, Հռոմի պապ, Մակրոն, Լավրով, Մեծ Բրիտանիա, ԱՄՆ, Ավստրալիա, Կանադա, Գերմանիա, Ավստրիա եւ այլ երկրներ ու քաղաքական գործիչներ: Նրանց գործնական քայլերից զուրկ հայտարարությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ կեղծ ժողովրդավարության արտահայտում, կեղծ հումանիզմ եւ կարեկցանք:

Մենք կոչ ենք անում միջազգային հանրությանը գործնական քայլեր ձեռնարկել՝ պատժել Ադրբեջանին ու կանխել հայերի հերթական ցեղասպանությունը:

Մենք դիմում ենք հատկապես Ռուսաստանի Դաշնությանը, ով 2020թ. պատերազմից հետո Արցախում ապահովում է փխրուն խաղաղություն, ճանաչել մեր ինքնորոշման իրավունքը, որի համար մենք տարբեր զրկանքների ու կորուստների գնով արդեն պայքարում ենք շուրջ 35 տարի»:

Արցախի ձայնը աշխարհին լսելի դարձնելու կարեւոր առաքելության մի բաժինը եւս Արցախում ՀՅԴ-ն է ստանձնել: ՀՅԴ Հայ դատի գրասենյակները ստեղծված կացության ու զարգացումների մանրամասները ամենօրյա կերպով փոխանցում են աշխարհի տարբեր դիվանագիտական կառույցներին եւ շահագրգիռ կողմերին: Այդ գործընթացի մեջ շատ մեծ աշխատանք է ծավալում ՀՅԴ Հայ դատի Արցախի գրասենյակը, որի աշխատակից Գեւորգ Իսկաջյանը ակցիայի ընթացքում իր խոսքն ասաց աշխարհին.

«100 օր է, ինչ սկսվել է Արցախի շրջափակումը: 100 օր աշխարհից կտրված, 100 օր առանց կենսական պաշարների՝ սննդի եւ դեղորայքի, 100 օր առանց ջեռուցման, 100 օր առանց կրթության, 100 օր մթության մեջ:

Չնայած այս ամենին, Արցախի ժողովուրդը դիմակայել է ճնշումների, դժվարությունների եւ մարդու իրավունքների ոտնահարումների, որոնք իրականացրել է Ադրբեջանը՝ իր իսկ կողմից պարտադրված շրջափակման ընթացքում:

Երբեմն թվում էր, թե Արցախի ժողովուրդը մենակ է այս ճգնաժամում, երբ համաշխարհային խոշոր տերություններն աչք են փակում Ադրբեջանի կողմից մարդու իրավունքների ոտնահարման վրա, նույնիսկ Միջազգային արդարադատության դատարանի, Amnesty international-ի եւ Human Rights Watch-i նման կազմակերպությունների դատապարտումներից հետո:

Բայց Արցախը երբեք միայնակ չէր: Ստեփանակերտից մինչեւ Վաշինգտոն, Կանադայից մինչեւ Եվրոպա, Ավստրալիայից մինչեւ Հարավային Ամերիկա եւ Մերձավոր Արեւելք՝ ՀՅԴ Հայ դատի գրասենյակները, որոնց օգնում են սփյուռքահայերը, լցված Արցախի ու նրա ժողովրդի հանդեպ անմնացորդ սիրով, աշխատել են օր ու գիշեր՝ աշխարհում բարձրացնելու իրազեկվածությունը եւ խթանելու համաշխարհային տերությունների գործողությունները:

Այս ընթացքում մենք լսել ենք բազմաթիվ երկրների հայտարարություններ, որոնք դատապարտում են Ադրբեջանին իրենց գործողությունների համար, բայց այժմ եկել է ժամանակը խոսքից գործի անցնելու՝ Ադրբեջանի դեմ շոշափելի պատժիչ միջոցներ սահմանել:

Չնայած այս ամենին՝ Արցախը պատրաստ է կրկին ու կրկին անցնել այս ամենի միջոցով, որովհետեւ այսօր Արցախն իրենից մի փոքրիկ հողակտոր

չի ներկայացնում, այլ աշխարհի այն մարդկանց, ովքեր հավատում են ազատությանը, հավատում են ինքնորոշմանը, մարդու իրավունքներին, լավ ապագային»:

Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆ

Սահմանադրության փոփոխության սահմանադրականության հարցով ԱԺ-ն դիմել է Գերագույն դատարան

Մարտի 23-ին հրավիրվել է Արցախի Հանրապետության Ազգային ժողովի հերթական նիստը, որի ընթացքում քննարկել են ԱՀ Սահմանադրության փոփոխությունը. այն ներկայացվում է երկրորդ ընթերցմամբ: ԱԺ գլխադասային՝ պետաիրավական հարցերի մշտական հանձնաժողովն առաջին ընթերցումից հետո նախագծի վերաբերյալ առաջարկություն չի ստացել: Խորհրդարանը քվեարկությամբ միաձայն հավանություն է տվել Սահմանադրական փոփոխությանը:

ԱԺ նախագահ Արթուր Թովմասյանը ներկայացրել է փոփոխության Սահմանադրությանը համապատասխանելիությունը որոշելու հարցով Գերագույն դատարան դիմելու վերաբերյալ ԱԺ որոշման նախագիծը: 32 կողմ ձայնով այն հավանության է արժանացել: Հարցի քննարկումն ընդհատվել է՝ մինչեւ Գերագույն դատարանից պատասխան ստանալը:

Հիշեցնենք, որ մարտի 15-ին գումարված Ազգային ժողովի հերթական նիստում առաջին ընթերցմամբ ընդունվել է Արցախի Հանրապետության Սահմանադրության փոփոխության մասին նախագիծը:

Վերաքննիչ դատարանի դատավորի ձգձգված ընտրությունը

Մարտի 23-ին կայացած նիստում ԱՀ խորհրդարանը փակ գաղտնի քվեարկությամբ՝ 21 կողմ, 11 դեմ ձայների հարաբերակցությամբ ԱՀ Վերաքննիչ դատարանի դատավոր է նշանակել Արսեն Ամիրջանյանին: Վերջինիս ընտրության հարցն ընդգրկված էր նաեւ փետրվարի 23-ին գումարված նիստի օրակարգում, սակայն քվեարկությունն այդպես էլ չի կայացել: Նախքան նիստի աշխատանքներին անցնելը, ՀՅԴ խմբակցության պատգամավոր Դավիթ Իշխանյանը հայտարարել է, որ խորհրդարանի 3 ընդդիմադիր խմբակցությունները նիստին չմասնակցելու որոշում են կայացրել՝ հաշվի առնելով ներքին խնդիրները, մեր առջեւ ծառացած մարտահրավերները:

Խմբակցությունների պատգամավորների հեռանալուց հետո հաշվիչ հանձնախմբում քվորում չի ապահովվել, քանի որ հանձնախմբի 5 անդամներից 3-ը տվյալ խմբակցությունների անդամներ են:

Այնուհանդերձ, ԱՀ ԲԴԽ նախագահ Կարեն Սաղյանը ներկայացրել է դատավորի թեկնածու Արսեն Ամիրջանյանի կենսագրական եւ աշխատանքային գործունեության տվյալները:

Վերաքննիչ դատարանի դատավորի թեկնածու Արսեն Ամիրջանյանը իր խոսքում հիմնական շեշտը դրել է իր մարտական ուղու վրա. «91-92թթ. Հադրութի ոստիկանության շրջբաժնում զբաղեցնում էի պրոֆիլակտիկայի բաժանմունքի պետի պաշտոնը, ոստիկանության պետն Արցախից հեռացել էր, համարյա մեկ տարի ինձ նշանակել են շրջբաժնի պետի պաշտոնակատար: Այդ ընթացքում համագործակցել եմ պարտիզանական շարժման հետ: Իմ ընկերները եղել են Արկադի Տեր-Թադեւոսյանը, Արթուր Մկրտչյանը, այստեղ նստած Արշակ Գրիգորյանի հայրը՝ Վիգեն Գրիգորյանը. այն ժամանակ նա Տողի ենթաշրջանի պարտիզանական շարժման համակարգողն էր: Կոմանդոսի հետ միասին մասնակցել եմ Սարինշեն գյուղի ազատագրմանը, Տող գյուղի ազատագրմանը, այնուհետեւ ոստիկանության խմբի հետ՝ արդեն քննիչի պաշտոնում մասնակցել եմ Ֆիզուլիի շրջանում, Կարախանբեյլիում ծավալված գործողություններին եւ հասել մինչեւ Ժդանովի մոտ»:

Անդրադառնալով իր թեկնածության առաջադրմանը, դատավորը նշել է, որ Արցախի դատական համակարգը փոքր է, թափուր տեղերն առաջանում են 5-7 տարին մեկ անգամ: «2018թ. դիմել եմ եւ ընդգրկվել առաջխաղացման ցուցակում: Այնպես է ստացվել, որ թափուր տեղ առաջացել է սույն թվականի հունվարի 3-ին, այսինքն՝ 7 ամսից հետո պիտի թոշակի անցնեի: Լսել եմ այն կանխավարկածը, որ շատ քիչ ժամանակ է մնացել աշխատելու, կարծես թե նպատակահարմար չէ: Այստեղ խնդիրը նույնիսկ թոշակի չափի տարբերության մեջ չէ, չափը շատ չնչին է, այլ՝ անունի, ստատուսի մեջ է»,- ասել է թեկնածուն՝ ավելացնելով, որ 21 տարի աշխատել է առաջին ատյանի դատարանում եւ իր նախկին գործընկերները վաղուց դատական համակարգում բարձր պաշտոններ են զբաղեցնում:

Դատավորի թեկնածուի խոսքը լսելուց հետո, խորհրդարանը հարցի քննարկումը հետաձգել է մինչեւ ԱԺ առաջիկա հերթական նիստը:

Իսկ մարտի 23-ին կայացած նիստում պատգամավոր Դավիթ Գալստյանը ներկաների ուշադրությունը հրավիրել է Վերաքննիչ դատարանի դատավորի ընտրության մասին փետրվարի 23-ին ԱՀ ԱԺ նախագահին ուղղված հանրագրին: Մի խումբ հասարակական կազմակերպություններ ու հանրային գործիչներ հանրագրով մտահոգություն են հայտնում 3-4 ամսով դատավոր ընտրելու նպատակահարմարության մասին:

ԱՀ ԱԺ նախագահ Արթուր Թովմասյանը հակադարձել է՝ նշելով, որ կանոնակարգը հնարավորություն չի տալիս հասարակության կողմից ճնշումների ենթարկվել:

Հավելենք, որ Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը նոյեմբերի 22-ին դիմել է Ազգային ժողովի նախագահին՝ Արցախի Հանրապետության Սահմանադրության փոփոխության նախագիծը վերադարձնելու նպատակով՝ այն հանելով շրջանառությունից:

Նման որոշման համար, ըստ պաշտոնական տեղեկատվության, պատճառ են հանդիսացել «Արցախի Հանրապետության սահմանադրական փոփոխության նախաձեռնության իրացման ընթացքում հնչած տարաբնույթ քաղաքական գնահատականները, ինչպես նաեւ նախագծի վերաբերյալ հանրության շրջանում առաջացած բացասական արձագանքները»: Այնինչ «հանրության շրջանում առաջացած բացասական արձագանքները» արտահայտվել է իշխանամետ մի շարք հասարակական կազմակերպությունների համատեղ ֆեյսբուքյան գրառման միջոցով:

Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Արթուր Խաչատրյանը եւ Գեղամ Ստեփանյանը աշխատանքային այցով գտնվում էին Հարավային Ամերիկայում

ՀՅԴ Հարավային Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի հրավերով եւ Մարդու իրավունքների համաշխարհային երրորդ ֆորումի աշխատանքներին մասնակցելու նպատակով ՀՅԴ անդամ, Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Խաչատրյանը եւ ԱՀ մարդու իրավունքների պաշտպան Գեղամ Ստեփանյանը մարտի 20-24-ն այցելել են Արգենտինայի Հանրապետություն եւ Ուրուգվայի Արեւելյան Հանրապետություն:

Պատգամավորը ֆորումի շրջանակներում կազմակերպված «Խաղաղության գործընթացները Լատինական Ամերիկայում եւ աշխարհում» պանելային քննարկման ժամանակ ներկայացրել է Արցախյան հակամարտության ծագման պատմությունը, զարգացումը, Արցախի Հանրապետությունում եւ Հայաստանի սահմաններին 2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո եւ 2021-22 թվականներին Հայաստանի դեմ սանձազերծված ագրեսիայի հետեւանքով ստեղծված կացությունը եւ հակամարտության կարգավորման ուղիները: Նա նաեւ պատասխանել է քննարկման մասնակիցների հարցերին:

Ֆորումի շրջանակներում կազմակերպված «Մարդու իրավունքների խախտումներն ու ցեղասպանության սպառնալիքները» խորագրով քննարկման ընթացքում Գեղամ Ստեփանյանը ներկայացրել է 2020 թվականի աշնանն Ադրբեջանի կողմից Արցախի ժողովրդի դեմ սանձազերծված պատերազմում եւ դրանից հետո իրականացված ռազմական հանցագործությունները, մարդու իրավունքների եւ միջազգային մարդասիրական իրավունքի կոպտագույն խախտումները: Պաշտպանը մանրամասն փաստեր է ներկայացրել Արցախի ժողովրդի դեմ Ադրբեջանի կողմից համակարգային եւ հետեւողական կերպով իրականացվող էթնիկ ատելության հանցավոր քաղաքականության վերաբերյալ, որի անհերքելի վերջնանպատակն Արցախի ժողովրդի էթնիկ զտումն ու ցեղասպանությունն է:

Արթուր Խաչատրյանը եւ Գեղամ Ստեփանյանը մի շարք հանդիպումներ են ունեցել Արգենտինայի եւ Ուրուգվայի քաղաքական շրջանակների հետ՝ ներկայացնելով Արցախյան հակամարտության կարգավորման սկզբունքներն ու մոտեցումները, Ադրբեջանի վրա միջազգային ճնշման անհրաժեշտությունը:

Ուրուգվայի մայրաքաղաք Մոնտեվիդեոյում Արթուր Խաչատրյանին ընդունել է Ուրուգվայի խորհրդարանի ներկայացուցիչների պալատի նախագահ Սեբաստիան Անդուխարը: Առավել քան մեկ ժամ տեւած հանդիպման ժամանակ ԱԺ պատգամավորը ներկայացրել է իրավիճակն Արցախի Հանրապետությունում եւ Հայաստանի Հանրապետության ու Ադրբեջանի միջեւ սահմաններին: Նա հատկապես կարեւորել է Արցախյան հակամարտության քաղաքական կարգավորումը՝ շեշտելով, որ տարածաշրջանում հնարավոր չէ երկարատեւ խաղաղություն հաստատել առանց հակամարտության արդարացի կարգավորման, որը պետք է հարգի Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը: Կողմերը նաեւ քննարկել են Հայաստանի եւ Ուրուգվայի հարաբերությունների ամրապնդման կարեւորությունը:

Կայացել է հանդիպում նաեւ Ուրուգվայ-Հայաստան խորհրդարանական բարեկամության խմբի պատգամավորների հետ: Հանդիպման մասնակիցները քննարկել են երկու բարեկամ պետությունների միջեւ հարաբերությունների ամրապնդման եւ ընդլայնման անհրաժեշտությունը:

Պատվիրակության անդամները հանդիպել են սենատոր, տուրիզմի նախկին նախարար Լիլիան Քեշիշյանի, Ուրուգվայի հանրային առողջապահության նախարարի տեղակալ Խոսե Լուիս Սաթջյանի հետ: Ուրուգվայում հանդիպումների շարքը եզրափակվել է Ուրուգվայի Արցախի ֆորումի (բարեկամների խմբի) անդամների հետ հանդիպմամբ: Հանդիպման ժամանակ կարեւորվել է Ուրուգվայում դեսպանի նշանակումը:

Արգենտինայի Ազգային կոնգրեսի պատգամավորների պալատի անդամներ Մոնիկա Ֆեյնի եւ Խուան Մարտին Մուսակիոյի հետ հանդիպմանը ներկայացվել են փաստեր Ադրբեջանի կողմից Արցախի շարունակվող շրջափակման հետեւանքով ստեղծված հումանիտար ճգնաժամի եւ մարդու իրավունքների լայնածավալ խախտումների վերաբերյալ՝ ընդգծելով, որ ադրբեջանական անպատժելիությանը հակազդելու համար հայ ժողովուրդն ակնկալում է միջազգային հանրության գործնական աջակցությունը:

Ուրուգվայի Արեւելյան Հանրապետության Մոնտեվիդեոյի նահանգային օրենսդիր մարմնում Արթուր Խաչատրյանը եւ Գեղամ Ստեփանյանը մասնակցել են օրենսդիր մարմնի կողմից Արցախի անկախության ճանաչմանը նվիրված միջոցառմանը:

Գեղամ Ստեփանյանը օրենսդիր մարմնի անդամներին շնորհակալություն է հայտնել 2020 թվականի նոյեմբերին Արցախի Հանրապետության անկախությունը ճանաչելու կապակցությամբ՝ նշելով, որ ճանաչման հռչակագիրն ընդունվել է Արցախի համար դժվարին ժամանակահատվածում՝ պատերազմից անմիջապես հետո՝ որպես գործնական ապացույց այն բանի, որ աշխարհում կան մարդիկ, որոնք հավատարիմ են ազատության եւ անկախության գաղափարներին:

«Մենք ճանաչել ենք Արցախի Հանրապետության անկախ լինելու իրավունքը եւ դատապարտել պատերազմը: Այսօր մենք մերժում ենք այն շրջափակումը, որի հետեւանքով հումանիտար ճգնաժամ է առաջացել Արցախում եւ տառապում է Արցախի ժողովուրդը»,- նշել է Մոնտեվիդեոյի օրենսդիր մարմնի ղեկավար Նիկոլաս Լասան:

Միջոցառումը կազմակերպվել է ՀՅԴ Հայ դատի Հարավային Ամերիկայի հանձնախմբի աջակցությամբ, որին մասնակցում էին նաեւ ՀՅԴ Հայ դատի Հարավային Ամերիկայի հանձնախմբի պատասխանատու Արամ Մուրադյանը եւ ՀՅԴ Հարավային Ամերիկայի Կենտրոնական կոմիտեի եւ Ուրուգվայի Հայ դատի հանձնախմբի անդամ Արփի Հոճաճանյանը:

Պատրաստեց Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆԸ

Մենք փորձում ենք կառավարել

Արցախի Հանրապետության կառավարության տեղեկատվական կենտրոնը մարտի 23-ին կազմակերպել է մամուլի ասուլիս Ադրբեջանի կողմից Արցախի շրջափակման 100-րդ օրվա առթիվ՝ ԱՀ պետական նախարար Գուրգեն Ներսիսյանի, Մարդու իրավունքների պաշտպան Գեղամ Ստեփանյանի եւ արտաքին գործերի նախարար Սերգեյ Ղազարյանի մասնակցությամբ:

Բանախոսները ներկայացնում են դեկտեմբերի 12-ից Ադրբեջանի կողմից Արցախն արտաքին աշխարհի հետ կապող միակ ճանապարհի (Լաչինի միջանցքի) արգելափակման հետեւանքով ստեղծված դժվարությունները եւ հետեւանքները, ինչպես նաեւ համապատասխան պաշտոնական դիրքորոշումներ ու գնահատականներ:

Լրագրողները պետնախարարից եւ ԱԳ նախարարից հետաքրքրվեցին, թե ինչպե՞ս է Ստեփանակերտը տեսնում խնդրի լուծումը, ինչպե՞ս է Արցախը պայքարելու ինքնորոշման իրավունքի համար, երբ Արեւմուտքը, Ռուսաստանը եւ Հայաստանը չեն խոսում այդ մասին, Բաքուն խոսում է ինտեգրացիայի մասին, իսկ Ստեփանակերտը՝ կտրականապես մերժում այն:

Սերգեյ Ղազարյանը՝ հարցին ի պատասխան նշեց, որ Արցախի պաշտոնական դիրքորոշումն այդ մասով բոլորին է հայտնի, սակայն Բաքուն փորձել է մարտի 1-ին տեղի ունեցած հանդիպումը խեղաթյուրել եւ այլ տեսանկյունից ներկայացնել: Նրա խոսքով, Արցախը շարունակելու է իր պայքարը իրացված ինքնորոշման իրավունքի միջազգային ճանաչման համար՝ ակնկալելով մեր հայրենակիցների եւ գործընկերների գործուն մասնակցությունը:

Պետնախարարը պատասխանեց, որ ժողովրդի տեսակետը, որն ամբողջությամբ համընկնում է Արցախի իշխանությունների տեսակետի հետ, արտահայտվել են ԱՀ ԱԺ խմբակցությունների կողմից արված հայտարարություններում: Նա նշեց, որ հարցի լուծմանը հասնելու համար պետք է աշխատել խնդրի ծագումնաբանությունը, բովանդակությունը եւ էությունը միջազգային հանրությանը հասցնելու համար, որը պետք է կատարվի նախ ՀՀ իշխանությունների եւ մեր գործընկեր կառույցների միջոցով:

Հաջորդ հարցն ուղղված էր արտասահմանյան լրատվամիջոցից, որը հետաքրքրվում էր բանախոսներից, թե ինչու ռուս խաղաղապահները չեն տարհանում ճանապարհը փակած ակտիվիստներին:

ԱՀ ԱԳ նախարար Սերգեյ Ղազարյանը՝ հարցին ի պատասխան նշեց, որ ակտիվիստների հիմնական նպատակներից մեկն էլ ռուս խաղաղապահներին հեղինակազրկելն է:

«Այս պահի դրությամբ ռուս խաղաղապահների ներկայությունն է հանդիսանում կարեւորագույն անվտանգային երաշխիքներից մեկը, եւ ադրբեջանական կողմը, գիտակցելով այդ հանգամանքը, դիմել է սադրանքի: Այն, որ նման իրավիճակում խաղաղապահները գործադրեն բոլոր ջանքերը, որպեսզի ստեղծված իրավիճակը հանգուցալուծվի եւ նմանատիպ սադրանքներ չկրկնվեն պետք է նշենք, որ այլ գործոններ եւս պետք է հաշվի առնել: Ռուս խաղաղապահների պատասխանատուների հետ մեր հանդիպումների ժամանակ այս բոլոր հարցերի մասին բարձրաձայնում ենք»,- ասել է Ս. Ղազարյանը:

Պետնախարար Գուրգեն Ներսիսյանը հավելեց, որ ռուս խաղաղապահների կողմից ակտիվիստների հեռացումը եւ այլ վայր տեղափոխելը ենթադրում է ուժի կիրառում, ինչը կարող է Է՛լ ավելի սրել իրավիճակը, եւ ռուս խաղաղապահների ցուցաբերած զգուշությունը տեղին է համարել:

Լրագրողները պետնախարարին խնդրել են ներկայացնել իրավիճակը ջրամատակարարման, էլեկտրականության մատակարարման վերաբերյալ, ինչպես նաեւ հարցրել, թե արդյո՞ք շարունակվում են բանակցությունները Հայաստանից Արցախ գազամատակարարման վերականգնման ուղղությամբ, ի՞նչ փուլում են դրանք, ի՞նչ է արվում Սարսանգի ջրամբարի հարցում եւ արդյո՞ք այն կկարողանա ամռանը ոռոգման համար ջուր ապահովել գյուղատնտեսությանը:

Պետնախարարը պատասխանեց, որ խմելու ջրի հետ կապված առկա է խնդիր՝ առատ տեղումների բացակայությամբ պայմանավորված, իսկ ինչ վերաբերում է խմելու ջրի որակին եւ անվտանգությանը, ապա այն պարբերաբար ենթարկվում է հետազոտության:

«Ճանապարհը արգելափակելուց հետո ադրբեջանցիների կողմից փորձ է արվել խմելու ջրի հետ կապված խնդիրներ առաջացնել Շուշիի շրջանի՝ Ստեփանակերտից կտրված համայնքների համար, որովհետեւ կան համայնքներ, որ խմելու ջուր ստանում են ներկայումս Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող տարածքից»,- ասել է Գուրգեն Ներսիսյանը:

Պետնախարարի խոսքով, դադարեցված Էլեկտրաէներգիայի մատակարարման վերականգնման ուղղությամբ երկխոսություն ադրբեջանցիների հետ չկա:

«Սարսանգի հնարավորություններն ամբողջությամբ չսպառելու համար Արցախում էլեկտրականությունը մատակարարվում է հովհարային անջատումների միջոցով, բայց իրավիճակն արդեն կրիտիկական է, եւ առաջիկայում՝ տեղումների բացակայության պարագայում, մենք կարող ենք ունենալ ընդհատումների ավելի երկար ժամանակ, ինչը հանգեցնելու է նաեւ ոռոգման հետ կապված խնդիրների»,- նշել է պետնախարարը:

Արտասահմանյան լրագրողներին հետաքրքրում էր նաեւ, թե սննդամթերքի առկա պաշարները որքան ժամանակ թույլ կտան Արցախի կառավարությանը՝ շարունակել բնակչությանն աջակցել:

Ի պատասխան՝ պետնախարարը նշել է, որ պաշարները գրեթե սպառման եզրին են:

«Կան սոցիալական խմբեր, որոնց պետությունը չի կարող միայնակ թողնել եւ պարբերաբար աջակցություն է ցուցաբերում: Հիմնականում փորձ է արվում ապահովել ալյուրի եւ խիստ անհրաժեշտության պարենի նվազագույն պաշարը բնակչության համար: Բազմաթիվ հրապարակումներում նշվել է, որ խանութներում չկա նույնիսկ առաջին անհրաժեշտության ապրանքներ, եւ հիմա պետությունն առավելապես փորձում է ուշադրություն դարձնել սոցիալական տարբեր խմբերի՝ հաշմանդամներ, բազմազավակ ընտանիքներ, բայց այդ հնարավորությունները եւս անսահմանափակ չեն. ի վերջո, մենք վաղուց ստիպված ենք ապավինել Կարմիր խաչի եւ ռուս խաղաղապահների աջակցությանը: Առանց նրանց կողմից ցուցաբերվող աջակցության՝ մենք վաղուց արդեն աղետալի վիճակ կունենայինք Արցախում»,- ասել է Գուրգեն Ներսիսյանը:

Մամլո ասուլիսին, որին մասնակցել են շուրջ 20 լրագրողներ աշխարհի 8 երկրներից, ԱՀ նորանշանակ պետնախարար Գուրգեն Ներսիսյանին հարց էր ուղղել նաեւ «Ապառաժ»-ը:

Հարցի նախաբանում «Ապառաժ»-ը նշել էր, որ պետական նախարարի պաշտոնը ստանձնելուց անմիջապես հետո խանութներում անսպասելի բարձր գներով սկսեցին վաճառվել էկզոտիկ մրգեր, բանջարեղեն, թարմ ծաղիկներ: Տվյալ մթերքների սպառվելուց հետո կառավարության կողմից սահմանվել են գներ, որոնք, ի դեպ, մինչեւ այժմ չեն աշխատում:

«Ապառաժ»-ը պետնախարարից հետաքրքրվել է, թե ո՞վ է այն արտոնյալը, որին հաջողվել է շրջափակման պայմաններում Արցախ հասցնել այդ մրգերն ու ծաղիկները, եւ արդյո՞ք այդ գործունեությունն իր մեջ հանցակազմ չի պարունակում:

Հարցին ի պատասխան՝ Գուրգեն Ներսիսյանը նշեց, որ դիտարկումը եւ հարցի կոնտեքստում պարունակվող միտքը այդքան էլ չեն համապատասխանում իրականությանը, եւ թանկացումները որեւէ կերպ պայմանավորված չեն իր կողմից Արցախի պետնախարարի պաշտոնը ստանձնելու հետ:

«Ստանձնելուց հետո, հաշվի առնելով շրջափակման պայմաններում առկա ծանրաբեռնվածությունը, ընդամենը օրերի ընթացքում մենք անհրաժեշտ իրավակարգավորումներ սահմանեցինք եւ սկսեցինք վերահսկել գնագոյացման հետ կապված գործընթացները: Այդ ուղղությամբ պետական երեք մարմիններ են աշխատում եւ պարբերաբար վարչական վարույթներ են հարուցվում»,- իր խոսքում ասել է Գորգեն Ներսիսյանը:

Պետնախարարի համար հետաքրքրականն այն էր, որ իր պաշտոնավարման ընթացքում այս հարցով «Ապառաժ»-ի խմբագրությունը իրեն չէր ահազանգել: Նա սակայն չհերքեց, որ գնագոյացման հետ կապված խնդիրներ կան, որն ունի օբյեկտիվ եւ սուբյեկտիվ պատճառներ:

«Մենք փորձում ենք հիմա կառավարել սուբյեկտիվ պատճառները: Ինչ վերաբերում է օբյեկտիվ պատճառներին, ապա պետությունը միջոցներ է ձեռնարկում օբյեկտիվ պատճառները տարբեր ծրագրերի միջոցով մեղմելու եւ դրանք վերացնելու համար: Մենք բոլորս հասկանում ենք, որ ծանր կացության մեջ հայտնված անձը մշտապես փորձում է այդ իրավիճակից դուրս գալու ուղիներ փնտրել, որքան էլ որ դա անօրինական ու անընդունելի լինի: Երբեմն ոչ այնքան անօրինականության մասին է լինում խոսքը, որքան արարքի հակաբարոյական լինելու տարրերն են ցցուն»,- նշել է պետնախարարը:

Նրա խոսքով, պետության կողմից փորձ է արվում դաշտն ամբողջությամբ վերահսկողության տակ վերցնել: «Զարտուղի ճանապարհներով ապրանքներն Արցախ բերող անձանց հայտնաբերելը, ապրանքների հայտնաբերելը, օրինական դաշտ բերելը, վարչական պատասխանատվության ենթարկելը, հարկային անհրաժեշտ վարչարարությամբ փորձ է արվում այդ բոլոր ուղիները չեզոքացնել եւ վերացնել, ընդ որում, ասեմ՝ դրանք ոչ թե ծնվել են վերջին օրերի ընթացքում, այլ դրանք՝ այդ զարտուղի ճանապարհները, ձեւավորված են վաղուց եւ անհրաժեշտ պահին չեն հայտնաբերվել, եւ մենք ստիպված ենք ոչ թե կանխարգելել, այլ վերացնել հետեւանքները»,- եզրափակել է պետնախարար Գուրգեն Ներսիսյանը:

Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հարափոփոխ պաշտոններ Արցախում

44-օրյա պատերազմից հետո Արցախի ներքին քաղաքական կյանքը բավականին հեղհեղուկ էր. մի քանի անգամ լրիվությամբ փոխվել է կառավարության կազմը, նշանակվել են նոր պետական նախարարներ ու նախարարներ: «Ապառաժ»-ը հակիրճ ներկայացնում է նրանց պաշտոնավարման ժամկետները եւ մեջբերումներ հանրային խոսքից:

Արցախի Հանրապետության պետական նախարարներ

Գրիգորի Մարտիրոսյան. Պաշտոնավարել է 2018թ. հունիսի 6-ից մինչեւ 2021թ. հունիսի 1-ը: Համատեղությամբ նաեւ ֆինանսների նախարար էր:

«Օրենսդրական նախաձեռնությամբ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ձեռնարկություններին տրամադրվել են հարկային արտոնություններ՝ ձեւավորելով առավել դյուրին եւ մրցունակ միջավայր: Հարկային դաշտի բարեփոխումներով նաեւ պարզեցվել են գործող ընթացակարգերն ու մեղմացվել վարչարարությունը, թեթեւացվել է փաստաթղթաշրջանառության բեռը, ընդլայնվել է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության շրջանակը»,- 17.06.2019թ. «Ժողովուրդ» օրաթերթին տված հարցազրույցում նշել է Գրիգորի Մարտիրոսյանը:

Այժմ՝ Գ. Մարտիրոսյանը «Ֆիդես» հիփոթեքային ընկերության խորհրդի նախագահն է:

Արտակ Բեգլարյան. Պաշտոնավարել է 2021թ. հունիսի 1-ից մինչեւ 2022թ. նոյեմբերի 3-ը: Համակարգել է չորս նախարարների գործունեություն՝ աշխատանքի, սոցիալական եւ միգրացիայի հարցերի նախարար, առողջապահության նախարար, արդարադատության նախարար, կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար:

«Ես աներկբայորեն պատրաստ եմ ցանկացած ծանրության ու պատասխանատվության, եթե դա դույզն ինչ օգտակար կլինի իմ Հայրենիքին ու ժողովրդին: Ի ԳՈՐԾ...»,- 02.06.2021թ. իր ֆեյսբուքյան էջում գրել է Արտակ Բեգլարյանը:

Արտակ Բեգլարյանն այժմ Արցախի նախագահի խորհրդականն է:



Ռուբեն Վարդանյան. Պաշտոնավարել է 2022թ. նոյեմբերի 4-ից մինչեւ 2023թ. փետրվարի 23-ը:

Նա համակարգում էր հետեւյալ նախարարների գործունեությունը՝ առողջապահության նախարար, արդարադատության նախարար, արտաքին գործերի նախարար, գյուղատնտեսության նախարար, կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար, սոցիալական զարգացման եւ միգրացիայի նախարար, տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար, քաղաքաշինության նախարար, ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար:

«Ես չեմ տեսնում հնարավորություն, որ ինչ-որ հրաշք է լինելու, մեզ շատ ծանր ճանապարհ է սպասում, մենք ունենք 900-ից ոչ ավելի օրեր, որոնք մենք պետք է արդյունավետ օգտագործենք այն փոփոխություններն անելու համար, որպեսզի անվտանգության եւ զարգացման հարցերը լուծենք»,- 04.10. 2022թ. հայտարարել է Ռուբեն Վարդանյանը:

Ազատվելուց հետո Ռուբեն Վարդանյանը պետական պաշտոն չի զբաղեցնում:

Գուրգեն Ներսիսյան. Նշանակվել է 2023թ. մարտի 1-ին:

Համակարգում է բոլոր նախարարությունների աշխատանքը՝ բացառությամբ արտաքին, պաշտպանության ու ներքին գործերի նախարարությունների:

«Անօրինական տնտեսական շրջանառության բոլոր որջերը բացահայտվելու են՝ անկախ պետական մարմինների հանդեպ դրանից ծնվող արհեստական ու ուղղորդված դժգոհությունից, անկախ տարբեր շրջանակների կողմից հնչող քննադատություններից:

Անընդունելի եմ համարում պետական մարմինների ծանրագույն աշխատանքը թերագնահատելն ու նսեմացնելը: Հանրությունը պետք է աջակցի պետական մարմիններին, իսկ նրանք, ովքեր ցանկություն չունեն, ավելի լավ է չխանգարեն»,- 20.03.2023թ. իր ֆեյսբուքյան էջում գրել է Գուրգեն Ներսիսյանը:

ԱՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն

Լուսինե Ղարախանյան. Պաշտոնավարել է 2020 թվականի մայիսի 26-ից մինչեւ 2022թ. փետրվարի 7-ը:

«Կրթության համակարգի խնդիրներն ու մարտահրավերներն այսօր բազմապատկվել են, հետեւաբար մեր պայքարն էլ ավելի է դժվարացել: Ազնվասեր, գրագետ ու հայրենասեր սերունդ կրթելուց զատ, մենք պետք է կարողանանք ստեղծել անվտանգությունը երաշխավորող գիտելիք՝ ինքնակառուցման հրամայականով: Սա է ժամանակի բացատրագիրը»,- 2021թ. սեպտեմբերի 1-ի ուղերձում նշել է նախարարը:

Լուսինե Ղարախանյանն այժմ ԱՀ նախագահի խորհրդականն է:

Անահիտ Հակոբյան. Պաշտոնավարել է 2022թ. փետրվարի 7-ից մինչեւ 2022թ. նոյեմբերի 22-ը:

«Ակնհայտ է, որ կրթական համակարգի խնդիրներն ու հարցերը օրեցօր բազմապատկվում են՝ բոլորից պահանջելով մեծ ջանք ու եռանդ առկա մարտահրավերների դիմակայման գործում: Վստահ եմ, որ այս զրկանքներն ու դժվարությունները մեզ ավելի կկոփեն, եւ մենք կհաղթահարենք բոլոր փորձությունները՝ ստեղծելով ամուր եւ ճկուն կրթական համակարգ, որը կդառնա հայրենիքի ազատության ու անվտանգության պատասխանատուն»,- 2022թ. սեպտեմբերի 1-ի ուղերձում նշել է նախարարը:

Այժմ աշխատում է՝ որպես ԱՀ նախագահի խորհրդական:

Պաշտոնից Անահիտ Հակոբյանի ազատվելուց հետո ԱՀ ԿԳՄՍ նախարարի պարտականությունները ժամանակավոր վերապահվել են նախարարի տեղակալ Հասմիկ Մինասյանին:

Նորայր Մկրտչյան. Նշանակվել է 2023թ. մարտի 16-ին: Իր պատասխանատվության ոլորտների մասին նախարարն այս ընթացքում հրապարակային ելույթներ չի ունեցել:

Սոցիալական զարգացման եւ միգրացիայի նախարարություն, նախկինում՝ ԱՀ աշխատանքի, սոցիալական եւ բնակարանային հարցերի նախարարություն

Միքայել Վիրաբյան. պաշտոնավարել է 2020թ. հուլիսի 15-ից մինչեւ 2020թ. դեկտեմբերի 2-ը:

«Ցանկացած պարագայում կարեւոր է քաղաքացիների դիմում-խնդրանքների մանրամասն ուսումնասիրման անհրաժեշտությունն ու բավարարումը, ընդունելության կազմակերպման հասանելիությունը, քանի որ յուրաքանչյուր քաղաքացու սոցիալական իրավունքի իրացման առումով նախարարությունը պատասխանատվություն է կրում»,- 04.08.2020թ. խորհրդակցության ժամանակ ասել է Մ. Վիրաբյանը:

Այժմ ՀՀ-ում Արցախի Հանրապետության Կառավարության օպերատիվ շտաբի պետն է:

Մանե Թանդիլյան. Պաշտոնավարել է 2020թ. դեկտեմբերի 2-ից մինչեւ 2021թ. սեպտեմբերի 1-ը:

«Շատ կարեւոր է, որպեսզի ոչ թե մարդկանց հավաքագրենք ու գրանցենք, այլ ունենանք աշխատատեղերի ստեղծման հնարավորություն: Եվ որպեսզի Արցախում ստեղծվեն աշխատատեղեր, պետք է լինեն խթանիչ հանգամանքներ, իսկ պայմանները դառնան այնքան գրավիչ, որ բիզնեսը ինքը գա Արցախ: Այս առումով նախագահ Հարությունյանի հետ ունենք պայմանավորվածություններ, որոնք, մեր գնահատմամբ, կարող են խթան հանդիսանալ եւ աջակցել գործատուներին, ինչպես նաեւ պայմաններ ստեղծել նորերի գալու համար»,- 10.12. 2020թ. ասել է Մանե Թանդիլյանը:

Նախքան պաշտոնին հրաժեշտ տալը Մանե Թանդիլյանը հայտարարել է, որ իր ծառայությունը Արցախին շարունակելու է «Ապրելու Արցախ» հիմնադրամի գործունեության շրջանակներում:

Արմինե Պետրոսյան. Պաշտոնավարել է 2021թ. սեպտեմբերի 1-ից մինչեւ 2022թ. նոյեմբերի 23-ը:

«Մենք մշակել ենք սոցիալական խնդիրների լուծման նոր մոտեցումներ՝ միտված աշխատատեղերի ստեղծմանը, փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացմանը, գյուղատնտեսությամբ եւ անասնապահությամբ զբաղվող անձանց աջակցությունների տրամադրմանը»,- 08.04. 2022թ. ասել է Արմինե Պետրոսյանը:

Արմեն Մանգասարյան. Պաշտոնավարել է 2023թ. հունվարի 10-ից մինչեւ մարտի 8-ը:

«Զարգացման ծրագրերի իրականացումը կշարունակվի նաեւ ընթացիկ տարում»,- 14.02. 2023թ. հարցազրույցում ասել է Ա. Մանգասարյանը:

Վահրամ Առաքելյան. Նշանակվել է 2023 թվականի մարտի 8-ին:

«Իմ եւ նախարարության աշխատակիցների կողմից կներդրվեն հնարավոր բոլոր ջանքերը՝ այս բարդ ու պատասխանատու շրջանը պատվով ու հաջողությամբ հաղթահարելու նպատակով»,- մարտի 9-ին նշել է նախարարը:

Շարունակելի

Նյութը պատրաստեց՝ Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆԸ
ԱրՊՀ Լրագրության բաժնի 4-րդ կուրսի ուսանողներ
Այլոնա ԱՎԱԳԻՄՅԱՆԻ եւ Մարսելա ՍՏԵՓԱՆՅԱՆԻ հետ համագործակցաբար

Սփյուռքն Արցախի կողքին է. աշխարհասփյուռ հայությունն իր աջակցությունն է հայտնում Արցախին

ՀՅԴ երիտասարդները պատրաստ են ամեն կերպ աջակից լինել Արցախին եւ արցախահայությանը՝ նպատակ ունենալով վերջ դնել շրջափակմանը:

ՀՅԴ երիտասարդական միություններն այս 3 ամիսների ընթացքում իրենց ներուժն օգտագործել են Հայաստանի, Սփյուռքի եւ համաշխարհային կառույցներին Արցախի ապաշրջափակման անհրաժեշտությանը եւ դրա շարունակման աղետալի վտանգների մասին բարձրաձայնելու համար:

Մարտի 21-ին լրացել է Արդբեջանի կողմից Արցախի շրջափակման 100-րդ օրը: Այդ օրը աշխարհի շատ երկրներում, որտեղ կան դաշնակցական կառույցներ, երիտասարդական, ուսանողական եւ պատանեկան միություններ, ակցիաներ են տեղի ունեցել՝ փաստելով, որ դաշնակցական երիտասարդները դիվանագիտական մակարդակով, հանրային բեմերում չեն մոռացել Արցախը եւ ամեն առիթով միջազգային հարթակներում ներկայացնում են Հայ դատն ու հայկական պահանջատիրությունը: Մարտի 21-ը խորհրդանշական օր էր, պայքարի 100-րդ օրը: Արցախը դիմակայում է եւ իր դիմակայությամբ թշնամուն ոչ է ասել՝ պարտադրելով հարգանք եւ ակնածանք:

Մարտի 21-ին ՀՅԴ Արցախի երիտասարդական միությունը Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում կազմակերպել է ակցիա՝ վերահաստատելու այդ կամքը, արցախցու ձայնը լսելի դարձնելու համայն աշխարհին, պայքարի վճռականությունն արտահայտելու եւ հայ ժողովրդի միասնական կամքն ապացուցելու համար:

Ակցիայի ընթացքում ՀՅԴ ԱԵՄ-ի եւ ՀՅԴ Հայ դատի Արցախի գրասենյակի անդամները հանդես են եկել դատապարտող հայտարարություններով՝ կոչ անելով աշխարհին՝ հարգել Արցախի ինքնորոշման իրավունքը, որի համար արդեն 35 տարի պայքարում է Արցախը, կանխել Ադրբեջանի նոր ցեղասպանությունը Արցախի նկատմամբ եւ հայտարարություններից անցնել գործնական քայլերի՝ պատժամիջոցներ սահմանել Ադրբեջանի նկատմամբ:

Ադրբեջանի կողմից Արցախի շրջափակման ցեղասպանական քաղաքականության 100-րդ օրը Արցախի երիտասարդները եւս մեկ անգամ ցույց են տալիս իրենց հաստատակամությունը՝ այս հողում ապրելու ու արարելու՝ ի հեճուկս համայն աշխարհի եւ բոլոր դժվարությունների:

Ախալքալաքի Սուրբ Խաչ եկեղեցու բակում Ջավախքի «Զորի Զորյան» երիտասարդական եւ պատանեկան միությունները կազմակերպել էին զորակցական հավաք՝ ի աջակցություն արցախահայության:

Երթը, որին մասնակցում էին նաեւ Ախալքալաքի Երիտասարդական կենտրոնի մանկավարժներն ու սաները, սկսվեց Ախալքալաքի ԵԿ-ից: Նրանք իրենց հետ տանում էին հայերեն եւ վրացերեն լեզուներով տարբեր վերտառությամբ պաստառներ՝ «Արցախ, մենք ձեր կողքին ենք», «Բացել Արցախի կյանքի ճանապարհը» եւ

այլն: Նրանք նախ կանգ առան Ախալքալաքի քաղաքապետարանի մոտ, որտեղ «Զորի Զորյան» երիտասարդական միության անդամները դիմում-նամակ հանձնեցին Վրաստանի խորհրդարանի հայազգի պատգամավոր Սամվել Մանուկյանի գրասենյակ եւ շարժվեցին դեպի Ախալքալաքի Սուրբ Խաչ եկեղեցի:

Հավաքի մասնակիցներին եկեղեցու բակում դիմավորեց Ախալքալաքի Սուրբ Խաչ եկեղեցու արժանապատիվ Տեր Թադեոս քահանա Մկրտչյանը եւ եկեղեցում Տերունական աղոթքից հետո հղեց օրհնության խոսք՝ շրջափակման մեջ գտնվող արցախահայությանը:

Զորակցական հավաքն ավարտվեց մոմավառությամբ:

Լիբանանում ՀՅԴ Լիբանանի պատանեկան միությունների Ընդհանուր վարիչ մարմինների կազմակերպած Արցախի զորակցական հավաքը, որին մասնակցում էին ՀՅԴ Լիբանանի պատանեկան միությունները, սկսվել է «Շաղզոյան» կենտրոնից:

Ավելի քան 100 պատանիներ ազգային-հեղափոխական երգերով, կանչերով եւ Արցախի մեծ դրոշով քայլեցին Բուրջ Համուդի թաղամասերով՝ ոգեւորելով տեղացիներին, ովքեր էլ իրենց աջակցությունը հայտնեցին:

Ավարտին պատանիները համախմբվեցին Բուրջ Համուդի նահատակաց հուշակոթողի դիմաց, որտեղ ՀՅԴ Լիբանանի պատանեկան միությունների անունից ելույթ ունեցավ Վանա Ավետիսյանը՝ ասելով, որ ներկա կացության մեջ դաշնակցական պատանիները պետք է բարձրաձայն հաստատեն, որ Արցախը միայնակ չէ, արցախցին միայնակ չէ եւ Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող գրավված հողերը մերն են:

Պատանիները վերահաստատեցին իրենց ուխտը, որը տանում է դեպի ազատ, անկախ ու միացյալ Հայաստան:

Արցախի շրջափակման 100-րդ օրվա կապակցությամբ՝ մարտի 21-ին ՀՅԴ Զավարյան ուսանողական միության եւ ՀՅԴ Լիբանանի երիտասարդական միության անդամներն այցելել են Լիբանանում ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Գերմանիայի, Նիդեռլանդների դեսպանատներ, ինչպես նաեւ՝ ԵՄ-ի եւ ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարի հատուկ ներկայացուցչի դեսպա-

նատներ եւ բողոքագրեր հանձնել դեսպաններին:

Բողոքագրի մեջ երիտասարդները կոչ էին անում դեսպաններին՝ պահանջել իրենց երկրներից խիզախ եւ վճռական միջամտություն ունենալ՝ կանխելու Արցախի վերահաս գոյության վտանգը:

Բողոքագրի մեջ շեշտվում էր, որ միջազգային ընտանիքը բավարար ճնշումներ չի գործադրում Բաքվի վրա՝ կանխելու նրա ցեղասպան քաղաքականությունը:

ՀՅԴ Շվեդիայի երիտասարդական միությունը մարտի 21-ին Արցախի 100-օրյա շրջափակման կապակցությամբ մայրաքաղաք Ստոկհոլմում բողոքի ակցիա է իրականացրել:

ՀՅԴ Նիդեռլանդների պատանեկան միության ընկերները քարոզչական պաստառներով իրենց աջակցությունն են հայտնել Արցախին:

«Այսօր 100 օր է, ինչ Արցախի 120 հազար հայեր արգելափակվել են Ադրբեջանի կողմից: Դադարեցրեք Արցախի էթնիկ զտումը: Բացեք Լաչինի միջանցքը»,- պահանջել են ակցիայի մասնակիցները:

Մարտի 21-ին Ֆրանսիայի ՀՅԴ «Նոր սերունդ» կազմակերպության անդամները բողոքի ակցիա են իրականացրել Փարիզում Ադրբեջանի դեսպանատան դիմաց՝ դատապարտելով Ադրբեջանի քաղաքականությունը, որի բռնապետական ռեժիմը շրջափակման մեջ է պահում 120 000 հայերի:

«44-օրյա պատերազմից գրեթե 3 տարի անց ադրբեջանական բռնապետությունը շարունակում է հալածել արցախահայությանը:

Ադրբեջանը շարունակում է անողոք ռազմական սադրանքներով թիրախավորել հայ խաղաղ բնակիչներին եւ զինվորներին:

Պատերազմը չի ավարտվի այնքան ժամանակ, քանի դեռ այս հանցագործությունները մնում են անպատիժ եւ խլանում աշխարհի լռության մեջ: Մեր պայքարը շարունակվում է»,- ասում էին ակցիայի մասնակիցները:

Նրանք եռագույն ծխագլաններ են արձակել եւ այրել Ադրբեջանի դրոշը:

Մարտի 19-ին ՀՅԴ Հունաստանի երիտասարդական միությունը տեղեկատվական ակցիա էր կազմակերպել

Սալոնիկեում՝ Արիստոտելոսի հրապարակում՝ Արցախի 97-օրյա շրջափակման կապակցությամբ: Երիտասարդները տեղեկատվական պաստառներ եւ նկարներ էին տեղադրել հրապարակում՝ անցորդներին իրազեկելով ստեղծված հումանիտար ճգնաժամի եւ Ադրբեջանի անմարդկային քաղաքականության մասին:

ՀՅԴ Սիրիայի ուսանողական, երիտասարդական եւ պատանեկան միությունների ընկերները իրենց աջակցությունը Արցախահայությանը հայտնել են տեսաուղերձով:

Սիրիահայությունը տարիներ շարունակ իրենց զորակցությունն Արցախին հայտնել է ոչ միայն խոսքերով, այլեւ գործով. վկան 2020թ. պատերազմին նահատակված երեք ընկերներն են:

ՀՅԴ Ավստրալիայի երիտասարդական միությունը Արցախի շրջափակման 100-րդ օրվա կապակցությամբ հանդես է եկել հայտարարությամբ՝ նշելով, որ ՀՅԴ Ավստրալիայի երիտասարդական միությունը իր 3 մասնաճյուղերով Արցախի կողքին է:

«Մեր հայրենիքը պաշտպանող զինվորներ, մենք այսօր եւ միշտ ձեր կողքին ենք:

Մեր պայքարը միասնական է, ճշմարիտ ու արդար, եւ այն չի դադարի՝ մինչեւ չհասնենք ազատ, անկախ ու միացյալ Հայաստանին»,- ասվում է հայտարարության մեջ:

ԱՄՆ Արեւելյան շրջանում ՀՅԴ Արեւելյան շրջանի Հայ Երիտասարդաց Դաշնակցության անդամները ակցիա են իրականացրել Ադրբեջանի դեսպանատան մոտ, դեսպանատան դարպասներին փակցնելով «Ադրբեջանական ահաբեկչության 100 օրը» գրությամբ պաստառ՝ կոչ անելով վերջ տալ ցեղասպանական քաղաքականությանը:

ԱՄՆ Արեւմտյան շրջանում ՀՅԴ ԱՄՆ Արեւմտյան շրջանի Հայ Երիտասարդաց Դաշնակցության անդամները պաստառներով շրջել են փողոցներում՝ մարդկանց իրազեկելով Արցախում ստեղծված հումանիտար ճգնաժամի մասին:

Արցախի շրջափակման 100 օրվա կապակցությամբ տարաբնույթ ներհամայնքային ակցիաներ են տեղի ունեցել Իրանի Սպահան եւ Թեհրան քաղաքներում:

Մարտի 22-ին ՀՅԴ Հայաստանի երիտասարդական միությունը բողոքի ակցիա էր կազմակերպել ՀՀ կառավարության շենքի դիմաց՝ մատնացույց անելով իրական մեղավորներին, ովքեր պատասխանատու են Արցախի 120 000 քաղաքացիների անվտանգության, մեր հայրենիքի անվտանգության համար, սակայն լուռ են եւ ձեռքերը լվացել են Արցախից՝ փորձելով Արցախի անվտանգության պատասխանատվությունը բարդել այլ երկրի վրա:

Երիտասարդները վերահաստատեցին պայքարին իրենց հավատարմությունը, անհամաձայնություն հայտնեցին ՀՀ իշխանությունների վարած քաղաքականությանը՝ ակցիայի ավարտին պաստառներ ու կարմիր ժապավեններ թողնելով կառավարության շենքի մայթին:

Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆ

Արամ Մանուկյանի ծննդյան 144-ամյակին նվիրված ցուցահանդես Ստեփանակերտում

«Ամեն ոք իր մասին է մտածում, իր երկրի սահմաններից այն կողմ եթե նայող կա, նայում է միայն հանուն իր շահերի: Ոչ ոք ոչ մի մարդ չի ուղարկի տաճկական ճակատ՝ տուն գնացող ռուսներին փոխարինելու: Եթե ընդհանուր ուժերով ճակատ պահելու խոսք է լինում, դա լոկ խոսք է՝ զուրկ իրական խոսքից ու անկեղծությունից: Հայերով ոչ ոք չի հետաքրքրվում՝ շոշափելի օգնություն հասցնելու մտքով: Դրա հակառակը՝ կա դավադրական վերաբերմունք: Մենակ ենք եւ պետք է ապավինեք միայն մեր ուժերին՝ թե ճակատը պաշտպանելու եւ թե երկրի ներսը կարգ հաստատելու համար»:

Հայկական պետականության հիմնադիր, ՀՅԴ անդամ, ականավոր պետական, քաղաքական, ռազմական գործիչ Արամ Մանուկյանի խոսքերն են, որոնք արդիական են նաեւ մեր օրերում: Նրա ծննդյան 144-ամյակի առթիվ Ստեփանակերտի Մշակույթի եւ երիտասարդության պալատում ցուցահանդես է կազմակերպվել ԱՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության մշակութային ժառանգության եւ ժողովրդական արհեստների բաժնի կողմից: Միջոցառմանը ներկա էր ԱՀ ԿԳՄՍ նորանշանակ նախարար Նորայր Մկրտչյանը, ԱՀ ԱԺ պատգամավորներ, հասարակական գործիչներ, երիտասարդներ:

Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնադիր հայր Արամ Մանուկյանի մասին խոսք է ասել նախարար Նորայր Մկրտչյանը: «Արամ Մանուկյանը մեզ եւ գալիք սերունդներին ավետել է մի մեծագույն ազգային կենսաբարոյական նշանակության պատգամ, այն է՝ ապավինել միայն ու միայն մեր սեփական ուժերին, երբեք չվհատվել, շարունակել պայքարը հանուն ազատության եւ անկախության՝ մինչեւ հաղթական ավարտ: Ասել է թե՝ եթե ուզում ես քո նվիրական հայրենիքում ապրել խաղաղ ու երջանիկ, եթե ուզում ես տերը լինել քո նախնիներից ժառանգած սրբություններին եւ սրբարաններին, ուրեմն հանուն այդ արժեքների պատրաստ եղիր կատաղի եւ անզիջում պայքարի»,- նշել է նախարարը:

Նրա խոսքով, մտովի վերապրելով այդ անասելի ծանր, ճակատագրական, սպառնալիքներով ու զրկանքներով լի իրադարձությունները, կարող ենք վճռականորեն բարձրաձայնել, որ այսօր ապրելով Արցախում, մեր մեծ սրբավայրում հերթական անգամ ի վիճակի ենք կերտել այն նույն հրաշքը, որը ժամանակին կերտվել է Վանում, Սարդարապատում, Շուշիում:

Արամ Մանուկյան պետական, կուսակցական գործչի մասին ելույթներով հանդես են եկել ԱՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Լեռնիկ Հովհաննիսյանը, ՀՅԴ Բյուրոյի անդամ, ԱՀ ԱԺ ՀՅԴ խմբակցության պատգամավոր Դավիթ Իշխանյանը, ԱՀ ԿԳՄՍ նախարարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների եւ կրոնի հարցերի բաժնի պետ Աշոտ Սարգսյանը:

Վերջինիս խոսքով՝ Արամ Մանուկյանն առաջին հերթին եղել է ՀՅ Դաշնակցության գործիչ, եւ դա է պատճառը, որ մինչեւ հիմա Արամ Մանուկյանի անվան փողոց չունենք Ստեփանակերտում: ,Ժամանակին, երբ ապամոնտաժվեց Լենինի արձանը, խնդիր առաջացավ նաեւ Լենինի փողոցը վերանվանել: Այդ ժամանակ ես «Արամ Մանուկյան» ենթակոմիտեի նախագահն էի: Առաջարկեցինք, որ Լենինի փողոցը վերանվանվի Արամ Մանուկյանի անունով, որովհետեւ Լենինը հանդիսանում էր Սովետական միության հիմնադիրը, իսկ Արամ Մանուկյանը՝ ազատ ու անկախ Հայաստանի հիմնադիրը: Բնականաբար, այն ժամանակվա ՀՀԾ-ի ներկայացուցիչները դեմ էին, եւ նրանց կողմնակից էին նաեւ կոմունիստները: Որպես միջանկյալ տարբերակ՝ առաջարկեցին «Երեւանյան փողոց» անվանումը, այնուհետեւ Վազգեն Սարգսյանի եղերական մահից հետո փողոցը կոչվեց նրա անունով: Այս պահին մենք մեր հանրապետության մայրաքաղաքում չունենք Արամ Մանուկյանի անունով փողոց»,- ասել է Աշոտ Սարգսյանը՝ առաջարկելով Զորգե փողոցը վերանվանել Արամ Մանուկյանի անունով, նաեւ նրա անվամբ գբոսայգի կառուցել:

Հավելենք, որ ցուցահանդեսը կգործի երկու շաբաթ:

Վերջին 100-ամյա պատմության մեջ պետական մտածելակերպի արմատավորման լավագույն օրինակը Արամ Մանուկյանն էր

ՀՅԴ Բյուրոյի անդամ, ԱՀ Ազգային ժողովի ՀՅԴ խմբակցության պատգամավոր Դավիթ Իշխանյանի ելույթը՝ Արամ Մանուկյանի ծննդյան 144-ամյակին նվիրված միջոցառմանը.

«Այսօր շատ այժմեական է Արամ Մանուկյանին նվիրված այս միջոցառումը. մեր հասարակությունը, մեզանից յուրաքանչյուրը, հայ ժողովուրդն ընդհանրապես պետք է իր արժանին մատուցի Արամ Մանուկյանին: Ես կփորձեմ Արամ Մանուկյանի կերպարի եւ մեր օրերի կապը ներկայացնել: Շատ արդիական է, երբ խոսում ենք պետական գործչի, նրա հատկանիշների մասին՝ ուսումնասիրելով նրա կենսագրությունը, նրա գործունեությունը՝ դա լինի Արեւմտյան Հայաստանում, երբ նա գործչի կարգավիճակով այնտեղ էր, Վանի ինքնապաշտպանությունը, այնուհետեւ՝ Հայաստանի Հանրապետություն, Սարդարապատ:

Պետական մտածելակերպի արմատավորման լավագույն օրինակը մեր վերջին հարյուրամյա պատմության մեջ Արամ Մանուկյանն էր: Եթե ուսումնասիրեք իր օրագիրը, իր հիշողությունները, Արամ Մանուկյանի մասին գրված վկայությունները, ընդամենը մի քանի տարի առաջ լույս տեսած լիբանանահայ պատմաբան Երվանդ Փամբուկյանի «Արամ Մանուկյան. նամականի»՝ արխիվներից դուրս բերված այդ հրաշագործ աշխատությունը, ապա կարող ենք ծանոթանալ պետական գործչի կերպարին: Ես ինձ իրավունք եմ վերապահում նրան համեմատելու մեր ժամանակների Արթուր Մկրտչյանի հետ: Երկուսն էլ անկախ հանրապետության ծնունդի ժամանակահատվածում շատ կարճ պաշտոնավարեցին, երկուսն էլ իրենց գծերով շատ նմանություններ ունեն՝ ազնվությունը, առաջնորդ լինելու հանգամանքը: Շատ է խոսվում «առաջնորդ, գաղափարի մասին: Այս առումով փորձենք մեր օրերը համեմատել Արամի ապրած ժամանակաշրջանի հետ: Ես կուզենայի Դրոյի հետ միջադեպի օրինակը բերել, թե ինչպես է Դրոն, այդ բազմավաստակ ռազմական, քաղաքական գործիչը փորձում ընդամենը ավտոտնակից մեքենա վերցնել, եւ ավտոտնակի պետ Խաչիկ Ստեփանյանը մերժում է՝ ապավինելով Արամին: Արամի եւ Դրոյի ընդհարման պատմությունը շատ յուրահատուկ ապացույց է, թե ինչպիսի կեցվածք ուներ Արամ Մանուկյանը: Կամ մեկ այլ դրվագ. հատուկ կոմիտեի շրջանում, Արամի պաշտոնավարման ժամանակ Չոլախ Գեւորգի կամ Թոփալ Գեւորգի նկատմամբ նրա ցուցաբերած վերաբերմունքը: Հայտնի դաշնակցական խմբապետ-գործիչը փորձում է իրեն դրսեւորել այլ վիճակով: Մեկ-երկու անգամ Արամը ներել էր նրա վարքագիծը, բայց վերջում իր հանձնարարությամբ Գեւորգին գնդակահարում են: Ես չեմ քարոզում մեր օրերում գնդակահարություն, բայց քարոզում եմ, որ ունենանք պետական գործչին վայել կեցվածք:

Առանձնահատուկ տեղ ուներ Արամի վերաբերմունքն իր հակառակորդների, թշնամիների նկատմամբ: Տարբեր դրվագներ կան թե՛ Վանում, թե՛ Հայաստանի անկախության առաջին օրերին. թեկուզ Խալիլ փաշայի հետ իր հարաբերությունները: Խորհրդային պատմագրությունը կեղծված, տարբեր ձեւերով մեզ փորձել է այլ իրականություն մատուցել, բայց Խալիլ փաշայի հետ իր հարաբերություններում տեսնում ենք, թե ինչպիսի վերաբերմունք ունեին մեր թշնամիները, հակառակորդները մեր առաջնորդի նկատմամբ: Սա, իհարկե, այժմեական է: Ինչպիսի հարաբերությունների մակարդակ պիտի ունենալ, որ մեր հակառակորդը խոնարհվի, արժանին մատուցի՝ նույնիսկ Արամի պահանջով իրենց հեռանալուց հետո հայկական կողմին զենք-զինամթերք տրամադրելով:

Շատ է խոսվում Արամ Մանուկյան պետական, քաղաքական, ռազմական գործչի մասին: Չպետք է մոռանալ, որ Արամ Մանուկյանն առանց իր կուսակցության, առանց Հայ Յեղափոխական Դաշնակցության չէր կարող ունենալ այս կերպարը: Երբեմն մենք փորձում ենք մեր կերպարների միայն մի մասը լուսաբանել: Ես պարտավորված եմ, որպես ՀՅԴ բարձրագույն մարմնի անդամ, հպարտորեն ասել. այո՛, Արամ Մանուկյանը կուսակցական գործիչ էր. ուսումնասիրեք իր անցած ճանապարհը՝ Վասպուրականում, Կարսի հնոցում, Արեւելյան Հայաստանում, Բաքվում, Գանձակում, եւ դուք կտեսնեք, թե ինչպիսի գործունեություն է ունեցել այդ ազնվագույն պետական, հասարակական, քաղաքական եւ կուսակցական գործիչը: Այսօր այժմեական է դա: Պետք է կարողանալ ամենահիրական պատկերը երեւան հանել, օգտագործել:

Այնուհանդերձ, ուզում եմ շնորհակալություն հայտնել եւ ողջունել այս նախաձեռնությունը՝ հույս ունենալով, որ Արամ Մանուկյանի կերպարն ուսումնասիրելով՝ յուրաքանչյուր ոք իր մեջ կարող է տեսնել Արամ Մանուկյանին: Արամ Մանուկյանի թողած ժառանգությունը, պատգամը հենց այն կլինի, եթե յուրաքանչյուրս ապրենք այդ ոգով, այդ ոճով եւ գործենք այդպես»:

Հեղափոխականության ոգին Արամ Մանուկյանն ստացավ իր հայրենի հողից՝ Շուշիից

«Արտաշես Աստվածատրյանի բնորոշմամբ՝ Արամը ծնվեց այն տարում, երբ Ռաֆֆին ստեղծում էր իր «Կայծերե-ը, այսինքն՝ հեղափոխականության ոգին Արամն ստացավ իր հայրենի հողից՝ Շուշիից, հայ մեծ մտավորականի գլուխգործոցներից մեկի լույսընծայումով: Արամը Արցախի զավակն էր, ինչպես ինքն է 1904թ. Ռուբենի հետ մի զրույցում ասել՝ ես լավ գիտեմ Ղարաբաղը, քանի որ նրա զավակն եմ: 1916թ. հայ փախստականների առաջին համագումարում ինքը նույնպես շեշտեց, որ ռուսահպատակ է՝ ծնունդով Շուշիից»,- այս մասին Արամ Մանուկյանի ծննդյան 144-ամյակի առթիվ Ստեփանակերտում կազմակերպված ցուցահանդեսի բացման արարողության ժամանակ ասաց ԱՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Լեռնիկ Հովհաննիսյանը:

Նրա խոսքով՝ Արամը շատ վաղ նետվեց հայ հեղափոխական ազատագրական պայքարի հորձանուտը. «Նրան տեսնում ենք թե՛ Շուշիում, թե՛ Երեւանում աշակերտական հեղափոխական շարժումներին մասնակցելիս, այնուհետեւ՝ Բաքու, Կարս, Սալմաստ, Վան, նորից՝ Արեւելյան Հայաստան, Երեւան: Այս բոլոր տեղերում էլ Արամը ցույց է տվել իր շրջահայացությունը, հաստատակամությունը, կտրուկ որոշումներ կայացնելու վճռականությունը եւ նրա զգուշավորությունը: Կոմսն իր հուշերում նշում էր, որ երբ Արամը գնացել էր Վան, բոլորին կասկածում էր, բոլորի նկատմամբ զգուշավոր էր, մինչեւ չհամոզվեր, որ այս մարդիկ իրոք նետված են հեղափոխական պայքարի հորձանուտի մեջ եւ ինքը նրանց հետ ճանապարհ ունի անցնելու»:

Արամը պայքարում էր տարբեր խորթ երեւույթների դեմ, որն այդ ժամանակ, ցավոք սրտի, կար հայ հասարակության մեջ: ԱՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալի խոսքով՝ Արամն անխնա պայքար էր մղում հայ ժողովրդի հատվածականության մտայնությունների դեմ, հատկապես՝ Վանում, քանի որ ինքը դրսից եկած էր, պետք է կարողանար գավառական հայրենասիրությամբ տարված Վանի երիտասարդությանը համոզեր, որ ինքը եկել է նրանց փրկելու, երկրում ազգային-ազատագրական գաղափարներն արմատավորելու: Իր շրջահայացությամբ, իր հաստատակամությամբ նա կարողացավ Վանում ձեռք բերել այնպիսի հեղինակություն, որ նույնիսկ քրդերը Արամ Մանուկյանին ուղղված նամակում գրում էին «Վսեմափայլ պարոն Արամ», եւ պատահական չէ, որ Վանում ստացավ «փաշա» մականունը:

«Արամը դեռ 1903թ. հայ եկեցեղու գույքի բռնագրավման դժնդակ ժամանակաշրջանում առաջիններից մեկն էր, որ հստակ հայտարարեց, որ պետք է պայքարել ցարական բռնակալության դեմ: Նույնիսկ իր զինակիցները որոշակի թերահավատություն ունեին այդ տեսակետի հետ կապված, բայց հետո տեսան, թե Արամն ինչպես է դա կազմակերպում Բաքվում: Այն ժամանակ Բաքվի ՀՅԴ Կենտրոնական կոմիտեի որոշմամբ անցավ Գանձակ, որտեղ տեղի ունեցան ամենաարյունալի բախումները ցարական զորքերի եւ ոստիկանության դեմ, եւ այդ ամեն ինչի կազմակերպիչն Արամն էր: Արամն էր այն գաղափարը տվողը, որ չպետք է բաժանվել «արեւելահայի» եւ «արեւմտահայի», այլ բոլորս պետք է պայքարենք մեր միասնական հայրենիքի համար: Արամն էր, որ կարողացավ ՀՅԴ չորրորդ Ընդհանուր ժողովում իր ելույթով համոզել, որ չպետք է անընդհատ զինատար խմբեր ուղարկել եւ ամեն հրացանի համար մեկ հայորդի զոհել, այլ պետք է հենց Երկրում կազմակերպել այդ ամեն ինչը եւ Երկրում այդ ամեն ինչը ստեղծել»,- նշեց Լ. Հովհաննիսյանը:

Արամը, ըստ նրա, հեղինակություն էր ամեն տեղ: Նույնիսկ թշնամու հետ հարաբերություններում կարողանում էր բանակցությունները վարել 50-ամյա փորձառություն ունեցող դիվանագետի նման. «Իր հավատարիմ օգնական, Երեւանի պարետ Շահխաթունին ասում էր, որ երբ Խալիլ փաշայի հետ բանակցությունները եղան, Արամը տեսնում էր Շահխաթունի զայրույթը, բայց հետո վերջնարդյունքն այնպես եղավ, որ Շահխաթունին փոշմանեց, որ զայրացել էր Արամի վրա»:

Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Հայոց պետականության հիմնադիր Արամ Մանուկյան

Մարտի 19-ին լրացել է Հայաստանի Առաջին Հանրապետության պետական, հասարակական գործիչ, հայոց նորագույն պետականության հիմնադիր, ներքին գործերի նախարար, Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցության անդամ, Վանի նահանգապետ, Հայաստանի Առաջին Հանրապետության Ներքին գործերի նախարար Արամ Մանուկյանի ծննդյան 144-րդ ամյակը, որին նվիրված՝ Ստեփանակերտում տեղի են ունեցել միջոցառումներ:

Ստեփանակերտի Մշակույթի եւ երիտասարդության պալատում տեղի ունեցած ցուցահանդեսից հետո Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոցի անվան հանրապետական գրադարանում կազմակերպվել է դաս-դասախոսություն եւ քննարկում «Արամ Մանուկյան պետական գործչի ավանդը հայկական պետականության հիմնադրման եւ կայացման գործում» խորագրով, որին բանախոսում էին ԱՀ նախագահի խորհրդական Արմեն Սարգսյանը, ԱՀ ԿԳՄՍ փոխնախարար Լեռնիկ Հովհաննիսյանը, ԱՀ ԿԳՄՍ նախարարի խորհրդական Մելանյա Բալայանը:

Միջոցառմանը Արմեն Սարգսյանը նշեց, որ Արամ Մանուկյանի մասին հնարավոր չէ կարճ ու ամփոփ ներկայացնել, քանի որ Արամ Մանուկյան «մարդ-համակարգ»-ը դեռեւս ամբողջությամբ վերլուծված չէ, թեեւ նրա մասին բազմաթիվ գրքեր են հրատարակվել:

Որպես պատմաբան, Արմեն Սարգսյանն առանձնացրեց չորս յուրահատուկ ու կարեւոր անձնավորություններ՝ Արամ Մանուկյան, Գարեգին Նժդեհ, Նիկոլ Դուման, Հրայր Դժոխք:

«Պատկերացնո՞ւմ եք, Հայաստանի եւ Արցախի ներկայիս նեղ իրավիճակում, երբ ելքեր ենք փնտրում այս իրավիճակից դուրս գալու համար, երբ մեկ օրում հաղթանակած երկիրը դառնում է պարտված, երբ մեկ օրում կապիտուլյացիա չթելադրած, սակայն իրավունք ունեցող երկիրը դարձավ կապիտուլյացիա ընդունող երկիր, երբ ժողովրդի մոտ բարձրացել է հուսալքության ալիքը, դուռը բացվեր եւ հանկարծ այս 4 անձերը մտնեին այստեղ: Ես պատկերացնում եմ, որ շատ կարճ ժամկետում կփոխվեր ամբողջ իրավիճակը»,- ռոմանտիզմի եւ ոչ հեռավոր պատմական իրողությունների դաշտ տեղափոխվելով՝ ասել է պատմաբանը:

Արմեն Սարգսյանը փորձեց անցյալի պատմական դեպքերը կապել ներկա իրողության հետ:

«Մեր քաղաքական ներկապնակն այնպիսինն է, որ բոլորը մեղադրում են մեկը մյուսին եւ չեն կարողանում գտնել այս իրավիճակից դուրս գալու ելքերը: Հետաքրքիր է, ինչու այն ժամանակ ստացվեց, երբ որ թվում էր անհնարին: Որտե՞ղ էր ժողովուրդը, որտե՞ղ էին առաջնորդները, ինչպե՞ս էին այն ժամանակ գործում: Ի՞նչ նմանություններ ու տարբերություններ կան: Ի՞նչ նմանություններ ու տարբերություններ կան անձերի միջեւ, որ իրենցով կարողացել են հայկական պետականությունը պահել ու ինչ-որ տեղ ձեռնոց նետել ապագային՝ ասելով, որ այս պետականությունը հիմնել ենք եւ այն պետք է պահվի հավերժության համար, որքան որ գոյություն ունի հայ ազգը»,- ասել է Ա. Սարգսյանը:

Ո՞վ է Արամ Մանուկյանը: Պատմաբանն առանձնացրել է Արամ Մանուկյանի՝ որպես պետական գործչի կենսագրության մեջ 4 փուլեր՝ Վանի նահանգապետ, 1917թ. դեկտեմբերի17-ից մինչեւ 1918թ. մայիսի 28, մայիսի 28-ից մինչեւ հունիսի 24, երբ Քաջազնունու կառավարությունը Թբիլիսիից գալիս է Երեւան (այդ ժամանակ Արամ Մանուկյանը Երեւանում էր եւ նախապատրաստել էր պետականության հիմքերը, որի պատճառով էլ կոչվում է հիմնադիր), եւ Արամ Մանուկյանը՝ որպես ներքին գործերի նախարար:

Արմեն Սարգսյանը Արամ Մանուկյանին համեմատելով այլ գործիչների հետ, ընդգծեց այն տարբերությունը, որ Արամ Մանուկյանը ոչ թե տվյալ պահին ծագած հարցի լուծումն էր տալիս, այլ իր ցանկացած քայլ գաղափարախոսությամբ էր տոգորված, որն էլ Արամ Մանուկյանի՝ որպես առաջնորդի ամենամեծ տարբերությունն էր: Նրա յուրաքանչյուր քայլ փիլիսոփայությամբ էր օծված, որն էլ ծնված էր ազգային կուսակցության՝ Հայ Յեղափոխական Դաշնակցության կողմից, որի կարկառուն ներկայացուցիչներից էր նա:

Արամ Մանուկյանը շատ հեռատես քաղաքական գործիչ էր: Դեռեւս 1915թ., երբ բոլշեւիկյան կուսակցությունը ցաքուցրիվ վիճակում էր, Արամ Մանուկյանը գրել է մի քաղաքական ծրագիր, որը կոչվում էր Բոլշեւիկների հետ համագործակցության ծրագիր, եւ փորձել միավորել ուժերը ու միասնական պայքարել համազգային ծրագրերի համար:

«1917թ. գալով Հայաստան, Արամ Մանուկյանը ձեռնամուխ եղավ տեղում կազմակերպվածությանը՝ պաշտպանական ուժեր ստեղծել, տարբեր ռեֆորմներ անցկացնել, որն առաջին հերթին թաթարների դեմ պայքարելու համար էր: Դրոյի հետ Արամ Մանուկյանը կարողացավ ճնշել թաթարական մի շարք ապստամբություններ, որի արդյունքը եղավ այն, որ 50 թաթարական գյուղ ինքնակամ ենթարկվեցին հատուկ կոմիտեին, որ ստեղծված էր արդեն: Նա կարողացավ կարգավորել հայ-թաթարական հարաբերությունները: Պատկերացնո՞ւմ եք, մենք պետություն չունենինք, սակայն նա կարողանում էր կառավարել:

Արամ Մանուկյանի կարեւոր գործե-



րից էր նաեւ մաուզերիզմի դեմ պայքարը, երբ կռված տղաները տարբեր առիթներով թույլ էին տալիս մի շարք սխալներ, իսկ Արամ Մանուկյանը իր խստությամբ կարողացավ կանխել դա:

Հիմա հիշե՛ք Հայաստանի նորաստեղծ՝ 3-րդ հանրապետության ժամանակ ՀՀՇ-ին, հիշե՛ք այն իշխանիկներին, զորավարներին, որոնք տեղերում տիրապետություն էին հաստատում, հիշե՛ք, որ նրանք օրենքների չէին ենթարկվում, հիշե՛ք, թե նրանք ինչպես են դարձել հրամանատարներ, որը շարունակվել է մինչեւ մեր օրեր: Պատկերացնո՞ւմ եք, այն ժամանակ լիներ ՀՀ ներքին գործերի նախարար Արամ Մանուկյան»,- ասել է Ա. Սարգսյանը:

Նա կարեւորեց նաեւ Արամ Մանուկյանի այն գործունեությունը, երբ պետություն չունենալով հանդերձ, նա կարողացավ ինքնապաշտպանական ուժեր ստեղծել, որոնք պատրաստ էին հայկական 2-րդ կորպուսում, որը մեծ դեր կատարեց Սարդարապատի ճակատամարտում:

ԱՀ ԿԳՄՍ փոխնախարար Լեռնիկ Հովհաննիսյանն իր խոսքում անդրադարձավ Արամ Մանուկյանի ծննդավայրի հարցին, քանի որ կա երկու տեսակետ: Առաջին եւ, ըստ Լ. Հովհաննիսյանի, ճիշտ տեսակետի համաձայն՝ Արամ Մանուկյանը ծնվել է Շուշիում, իսկ երկրորդ տեսակետի համաձայն՝ նա ծնվել է Դավիթ Բեկ (նախկինում՝ Զեյվա) գյուղում:

«Այդ երկվությունը գալիս է Արամի հուշագիրներից, սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ճիշտը Շուշին է, որովհետեւ նա միշտ պնդում էր, որ Արցախի զավակն է: 1879թ. Զանգեզուրի չափաբերական մատյաններում չկա Սարգիս Հովհաննիսյան անունով մարդ: Այս հարցում հայոց եկեղեցին շատ բծախնդիր էր, եւ եթե լիներ՝ անպայման կգրանցեին»,- ասել է Լ. Հովհաննիսյանը:

Նրա խոսքով՝ Արամ Մանուկյանն առաջիններից էր, որ կարողացավ կոչ անել պայքարել ցարական բռնապետության դեմ այնպես, ինչպես թուրքական բռնապետության դեմ էին պայքարում:

«Բաքվում բոլորը զարմացել էին, թե ի՞նչ է խոսում Արամը, ինչպե՞ս պայքարել այդ հզոր պետության դեմ: Արամը հստակ բացատրեց՝ հարցնելով, թե մեր հայ ինքնության դեմ՝ Հայ առաքելական եկեղեցու կալվածքներն են բռնագրավում, մեր դպրոցներն են փակում, դրա դեմ պե՞տք է պայքարել, թե՞ ոչ: Եվ Արամ Մանուկյանի այս կոչն ի վերջո արթնացրեց բոլորին: Նույնիսկ այդ ժամանակ ՀՅԴ Բաքվի կոմիտեն որոշեց, որ ինքն այդ դիմադրությունը կազմակերպում է, սակայն, Բաքվում, որովհետեւ, պատմաբանները կհիշեն, Ցարական իշխանությունները գեներալ Անդրեեւի գլխավորությամբ ավելի մեծ հալածանքներ էին սկսել հայության դեմ: Այնտեղ պետք է պայքարը կազմակերպող լիներ եւ այդ անհատը եղավ հենց Արամ Մանուկյանը»,- նշել է Լ. Հովհաննիսյանը:

ԱՀ ԿԳՄՍ նախարարի խորհրդական Մելանյա Բալայանի կարծիքով, յուրաքանչյուր հայ, եթե փորձի ծանոթանալ Արամ Մանուկյան ազգային արժեքին, Արամ Մանուկյանի կերպարին, կզարմանա, թե ինչպիսի արժեքներ ենք ունեցել ու անտեսել:

Մ. Բալայանի խոսքով՝ թեեւ այսօր նշում ենք Արամ Մանուկյանի 144-ամյակը, սակայն ձեւական է դառնում այս ամենը, որովհետեւ ազգային պետականության իրական հիմնադրի գործունեությանն ու կյանքին անդրադարձ ենք կատարում միայն հոբելյանական տարիներին:

«Հայոց պետականության նոր ժամանակների քաղաքական կենսագրության հիմնադիրն է Արամ Մանուկյանը: Նա ապրել ու գործել է մեր ժողովրդի համար այնպիսի ծանր ժամանակներում, երբ հայ ժողովրդի լինել-չլինելու հարցն էր: 1915թ. Եղեռն, Արեւմտյան Հայաստանը արյան մեջ էր, Արեւելյան Հայաստանն էլ առանց չափազանցության նույն ճակատագրին պետք է արժանանար, սակայն լավ է, որ մենք ունեցանք Արամ Մանուկյանին ու իր գործընկերներին, ովքեր փրկեցին Հայաստանը»,- նշել է Մ. Բալայանը:

Նրա խոսքով, Արամ Մանուկյանի մտերիմներից էր Ռոստոմը՝ Ստեփան Զորյանը, ով մի միտք է առաջադրել, որը բնութագրում է Արամ Մանուկյանին:

«Նա ասել է՝ «Հողմը մեզ քշում է: Կարեւոր է, որ մենք չզառնվենք ժայռերին»: Հետո բացում է փակագծերը՝ ո՞րն է այդ հողմը. մի կողմից՝ բոլշեւիկյան Ռուսաստանն է, շատ հասկանալի իր գիջողական քաղաքականությամբ, իսկ մյուս կողմից՝ Օսմանյան Թուրքիան է՝ Հայաստանը կուլ տալու ծրագրով, որի թիկունքում Բրիտանական քողարկված քաղաքականության ռեժիսուրիան էր: Ռոստոմն այս խոսքերն ասելով՝ ավելացրեց, որ միայն Արամ Մանուկյանի պես հսկան էր, որ կարողացավ այս երկու հողմերի արանքով տանել Հայաստանը, որպեսզի Հայաստանը չվերանա աշխարհի երեսից, ու ստեղծեց Հայաստանի Հանրապետություն»,- ասել է Մ. Բալայանը:

Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆ

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կնունյանցների 17,
հեռ. +374 97 38 43, E-mail: aparajtert@gmail.com
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արծարծված տեսակետները չի կիսում:
Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում:
Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 700: Գինը՝ 100 դրամ:

Խմբագիր
Ա. Պուլուզյան